Պատասխան
Վերապրողների համար

Written by Phyllis Myers

Ինչո՞ւ ես

Ինչո՞ւ ես չմահացա, ինչո՞ւ եմ ապրում,ինչպե՞ս եմ ես ողջ մնացել, եթե այլ կերպ վարվեի ի՞նչ կլիներ.

Այս հարցերը կարող են լինել վերապրողի արձագանքը մի իրադարձության, երբ մեկ ուրիշը ունենում է կորուստ, բայց վերապրողը ոչ: Հավանաբար նա պատերազմում ողջ է մնացել, ապաքինվել է մահացու հիվանդությունից կամ Covid-ի համաճարակից, որը խլել է բազմաթիվ մարդկանց կյանքը, խույս է տվել դպրոցում կամ եկեղեցում զանգվածային կրակոցներից, փրկվել է ավտովթարից, երբ ընկերները ու սիրելիները մահացել են, բնական աղետի հետևանքով փլատակների տակ չի մնացել, օրինակ՝ փոթորիկ, ջրհեղեղ կամ հրդեհ կամ չի զոհվել այնպիսի ահաբեկչությունից, ինչպիսին եղավ Նյու Յորքի համաշխարհային Առևտրի կենտրոնում՝ ԱՄՆ: 9/11/01:

Երբ մարդը նման փորձառությունով է անցնում՝ ֆիզիկապես մնում է անվնաս, մինչդեռ մյուսները մահանում, վնասվածքներ են ստանում կամ զգալի կորուստ են կրում, անհնդատ մեկ հարց է առաջանում՝ Ինչո՞ւ ես.

Ընհանուր արձագանքը տեղի ունեցածի համար պատասխանատվություն զգալն է՝ հարցնելով: «կարո՞ղ էի ես փոխել և կանխել աղետը « «եթե ինչ-որ բան անեի, ամեն ինչ այլ կերպ կդասավորվեր»; Մարդիկ նման մտքեր ունեն, թեև ամեն ինչ իրենց վերահսկողությունից դուրս է; Ինչ-որ մեկը կարող է հայտնվել հիշողությունների կամ մղջավանջների գիրկը, տարվելով կատարվածի մասին՝ մտքերով, անհնդատ տանջվելով բավարար չանելու մտքերով, որի հետևանքով դառնում են դյուրագրգիռ կամ զայրացած և դժվարությամբ մարսում են այն, ինչ տեղի ունեցավ; Ահա մի քանի օրինակներ:

Վերապրող 1; Ռոբբ Տարական Դպրոց, ՈՒՎԱԼԴԵ՝ Տեխաս Նահանգ 2022թ: Դեռահաս աշակերտը ինքնաձիգով մտել էր դպրոց և կրակել ու սպանել է չորրորդ դասարանի տասնինը աշակերտի և երկու ուսուցչի. Այդ նույն դասարանում մի աշակերտ անվնաս գտան, բայց այդ գիշեր շատ հարցեր առաջացան «ինչո՞ւ նա այդպես վարվեց մեզ հետ, չէ որ մենք երեխաներ ենք և ոչ մի վատ բան չէինք արել»; Ինչո՞ւ իմ ընկերներից շատերը սպանվեցին, իսկ ես ողջ մնացի.

Վերապրող 2; Ռուսաստանի ներխուժումը 2022 -ին Ուկրաիայի Բուչա քաղաք; Քաղաքում տեղի ունեցած ավերվածությունները միայն սառցալեռի երևացող ծայրն էր; Կիևի, Չեռնիգովի և Սումիի շրջանների շատ գյուղերում ռուս զավթիչները այրեցին այնպիսի բաներ, որոնք տեղացիները չէին տեսել անգամ 80 տարի առաջ նացիստական օկուպացիայի ժամանակ: Մի կին իր ամուսնու հետ ետ վերադառձավ տուն մի քանի օրից՝ այն բանից հետո, երբ ռուսները սկսեցին ներխուժել Ուկրաինա. Նրանք հայտնաբերեցին, որ իրենց տունը վերածվել էր աղբանոցի և թալանվել էր ռուս զինվորների կողմից. Զինվորները ծխախոտը հանգցրել էին սեղանին, ալկահոլի դատարկ շշերը ամենուր էր և այս ամենը պատմում էին ամուսինները. Զինվորները վարվել էին կահկարասիքի հետ, այնպես ինչպես ցանկացել էին: Ամուսինները անգամ մահացած տղամարդու դի էին գտել իրենց բակում, որին կրակել էին գլխից՝

ձեռքերը կապված իսկ տաբատը հանած. Եվ այս տեսարանից հետո ամուսինների մոտ առաջացել էր հարցեր՝ « ինչո՞ւ մեզ թույլ տվեցին փախչել սպանությունից, թեև տունը վերածվել էր աղբանոցի, ինչո՞ւ հարևանների տների պես չէր այրվել ;

Վերապրող 3; Մեկ այլ կին իր երեխաների հետ, ռուսների ներխուժումը սկսելուց հետո, նրանք մնացին Բուչայում, բայց հոսանքը անջատվելուց և ջրերը կտրվելուց հետո պարզ դարձավ, որ նրանք պետք է հեռանան. Նրանք ոտքով փախնում էին դեպի մոտակա Իրփին արվարձան: Ռուս զինվորներից խուսափելու համար, երեքով շարժվում էին նեղ փողոցներով, երբ թեքվեցին մի փողոց սարսափահար ապշեցին, քանի որ տեսան դիակներով լի փողոց, այդ թվում անշունչ մարդ հեծանիվի տակ. Այնուամենայնիվ նրանք փախչելով ողջ մնացին, բայց հեծանիվի տակ մնացած տղամարդու տեսարանը դեռ հետապնդում էր կնոջը. « ես և որդիներս կարող էինք լինել այդ մարդու տեղը», ասաց նա, և շարունակեց՝ « ես զգում եմ բոլոր մահացած մարդկանց ցավն ու վիշտը».

Վերապրող 4: « Ես 2020 թվականին Հայաստան-Արցախ և Ադրբեջանի միջև 44 օրյա պատերազմի ժամանակ զինվոր էի. Մեր ստորաբաժանումն ուներ 200-ից ավելի մարդ, բայց դրանցից միայն 20-ը փրկվեցին մարտից. Փրկվածներից մեկը հովվի որդին էր, նա հարցնում էր « Ինչո՞ւ ես ողջ մնացի, մինչ ուրիշները մահացան»;

Վերապրող 5; « Ինձ ատրճանակի սպառնալիքով պահեցին և կողոպտեցին ու հարվածեցին դրանով՝ մարդասպանի կողմից, ով նույն շաբաթ չորս անմեղ զոհերի էր սպանել: Ես համոզված էի, որ արժանի չեմ ողջ մնալու, և որ սպանված զոհերից ոմանք ավելի շատ բարիք կբերեր, քանի որ ես արժեքավոր ոչինչ չունեի առաջարկելու. Մտքումս միշտ հարց է առաջանում՝ ինչո՞ւ ես, նրանցից մեկի փոխարեն».

Վերապրող 6; Երբ ես 13 տարեկան էի, ընկա իմ լավագույն ընկերոջ հետ ավտովթա մեջ րի մեջ, ով մահացավ դրանից. Հիմա ինքս ինձ հարցնում եմ « ինչո՞ւ ես էլ չմահացա, և ինչու ես».

Վերապրող 7; Տղաս, ով վարում էր ավտոմեքենա, իր լավագույն ընկերոջ հետ ընկան ավտովթարի մեջ, ընկերը մահացավ իսկ տղաս ողջ մնաց: Հինգ տարի անց, որդիս թմրանյութերի գերդոզավորումից ինքնասպան եղավ . Հիմա ես հասկանում եմ, թե ինչ նկատի ուներ նա, երբ ասեց « կուզենայի, որ ես նրա փոխարեն լինեի, ինչո՞ւ ես չէի».

Տարբեր վերապրողներ՝ տարբեր պատասխաններ

Մինչ ովմանք փորձում են մխիթարել վերապրողներին ասելով, « դու հաջողակ ես», կամ « դա ճակատագիր էր», վերապրողները հստակ հասկանում են, որ դրանք չեն իրենց ողջ մնալու երաշխիքը. Այլ դա հրաշք էր, որը պատահեց: Նրանք դեմ առ դեմ հանդիպեցին մահվան կամ սարսափելի կորստի հետ, և անշուշտ Աստված, Ով բախտից հզոր է, ճակատագրից զորավոր, մահից մեծ, որ անօգնականներին պաշտպանություն և զորություն տվեց, և կորածներին ու շփոթվածներին՝ ուղղություն: Կա Ամենահզոր Աստված, Ով անում է անհնարինը և փրկում է նրանց: Սիրող Աստված / Աստվածաշնչի Աստվածը /, պաշպանեց նրանց՝ առաջնորդելով վերապրողներին սարսափի միջով: Սուրբ Աստվածը այնտեղ էր, Ով կռացած օգնում էր Իր անարժան ստեղծած արարածներին: Զարմանալի չէ, որ Դավիթը գրել է Սաղմոս, որում ասվում է «ով է մարդը, որ Դու հոգ ես տանում» իսկ վերապրածները հարցնում են « Աստված իմ, ինչո՞ւ ես».

Ճիշտ այնպես, ինչպես կարող են լինել տարբեր պատճառներ, որպեսզի վերապրողը կասկածի տակ դնի իր գոյատևումը, այնպես տարբեր իրավիճակներում, վերապրողների համար կարող են լինել տարբեր պատասխաններ. Որոշ վերապրողներ կարող են տալ հարց «ինչո՞ւ ես», որովհետև նրանք փրկվել են, Սբ. Գրքի՝ Սուրբ և Ամենազորի միջամտությամբ, թեև նրան չեն ճանանչում Նրա զորությունը և ողորմությունը.

Նրանք չգիտեն, որ տիեզերքի Մեծ Աստվածը սիրում է իրենց և ցանկանում է անձնական հաղորդակցություն ունենա իրենց հետ: Նրանք շատ լավ գիտեն, որ հաղորդակցություն չունեն Նրա հետ, լավ մարդ չեն և փրկվելու առժանիք չունեն. « ինչո՞ւ Աստված կփրկի, ով այդքան մեղավոր և անարժան է »:

Աստված Իր շնորհքով ժամանակ է տվել դարձի գալու համար, նախքան դուք անձամբ կկանգնեք Նրա առջև: Ոչ ոք չգիտի թե որքան ժամանակ է տրված իրեն: Եթե Նա փրկեց ինչ որ դեպքից երեկ, դա չի նշանակում, որ դուք դառել եք անմահ: Ոչ ոք չգիտի թե վաղը իր հետ ինչ կբերի: Ամեն անգամ, երբ գալիս է Աստծո հետ դեմ առ դեմ կանգնելու ժամանկը, Նա ցանկանում է, որ դուք լավ հարաբերություն ունենաք Իր հետ: դա անհնար է ձեր կողմից, բայց դա կարող է անել, ճիշտ այնպես ինչպես Նա փրկեց ձեզ անհնարին վիճակից, Նա ճանապարհ է պատրաստել Իր հետ անձնական հաղորդակցվելու համար: Նա կարող է ներել ձեր բոլոր մեղքերը և որպես ձրի պարգև տալ հավիտենական կյանք: Նա ձեզ նման մեղավորների համար փրկելու ծրագիր ունի:

« Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց Իր միածին Որդուն, որ ամեն Նրան հավատացողը չ'կորչի, այլ հավիտենական կյանք ունենա » (Հովհ; 3:16): Հիսուստ՝ Աստծո Որդին, ով կատարելապես անմեղ է, աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին: **« Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրս իր ճանապարհին դարձանք, և Տերը (Հայր Աստվածը) Նրա (Հիսուսի) վրա դրեց մեր բոլորիս մեղքը (Եսայ. 53:6): Որ ինքն մեր մեղքերը Իր մարմնումը խաչափայտի վրա բարձրացրեց » (1 Պետր. 2:24):** Նշանակում է, որ մինչ Հիսուս մահանում էր խաչի վրա, Աստված քո բոլոր մեղքերը դրեց Հիսուսի վրա, և Նա վճարեց ինչպես քո, այնպես էլ բոլոր մարդկության մեղքերի գինը: Այժմ, երբ մեղքերի համար պատիժը վճարված է, Աստված ազատորեն առաջարկում է, մեղքերի ներման և հավիտենեկան կյանքի ձրի պարգևը, նրանց ովքեր կհավատան Տեր Հիսուս Քրիստոսին: **« հավատա Հիսուս Քրիստոսին և դու կփրկվես» (Գործք: 16:31**): Երբ դու հավատում ես Հիսուս Քրիստոսին, որպեսզի փրկվես, հենց այդ պահին դու դառնում ես Աստծո զավակը: **« Որովհետև ամենքս Աստծո որդիք են Քրիստոս Հիսուսի հավատքով» (Գաղ: 3:26):** Երբ ժամանակը գա, որ մահից հետո կանգնենք Աստծո առջև, այն վստահությամբ, որ մեր մեղքերը ներված են և կանգնած ենք Նրա առջև այն փոխհարաբերության մեջ, որ Նա մեր Հայրն է և մենք Նրա որդիներ ու մահից դեպի հավիտենական կյանք ենք անցել Իր հետ: Անկախ նրանից թե ժամանակը, որքան է սահմանված ձեզ համար, Իր հետ հաղորդակցվելու հնարավորությունը չանտեսեք: Զգուշացե՛ք քանի որ այլ հնարավորություն չի լինելու:

Կեղծ Բարոյականություն

Մեկ այլ վերապրող կարող է հարցնել « ինչու՞ ես» : Սարսափով անցնելիս բացահայտվում է նրանց ինքնությունը: Նմանները միշտ իրենց համարել են օժտված, գեր խելացի և բոլոր խնդիրները լուծելու ունակ, հարգված բարոյական անձնավորություն և առաջնորդ, ով կարող է

լուծել բոլոր խնդիրները: Բայց երբ նրանք հանդիպում են վտանգի առջև, անզոր են այն դադարեցնելու անգամ իրենց կյանքը փրկելու: Իրենց բարոյականությունը, ո՝չ իրենց և ո՝չ էլ կարող է փրկել ուրիշներին՝ վտանգից ու մահվանից: Ավելին, նրանք ենթակա են ամենաստոր արարքների՝ միայն թե իրենց կաշին փրկեն, եթե հարկն է ուրիշների մահվան հաշվին: Նրանց մեղավոր խիղճը կստիպի իրենց հարց տալ « իմ սխալը, որտե՞ղ էր, եթե ես կարողանայի, ինչու՞ ես չարեցի : Ես վախեցա, փախա և անօգնական թողեցի կամ ես եմ ուրիշի մահվան պատճառը »: Ընդունե՝ք, որ ձեր ամբողջ կյանքը կեղծիք է, և պարզապես անհույս և անօգնական մեղավոր եք:

Թերևս Աստված փրկեց ձեզ ֆիզիկական մահից, որպեսզի սովորեցնի ձեզ, որ Փրկչի կարիքը ունեք, ոչ միայն երկրի վրա ֆիզիկական կյանքի, այլև հավիտենական կյանքի համար: Բոլորն էլ՝ բարի թե վատ մարդիկ, Փրկչի կարիքը ունեն: **« Որովհետև շնորհքով էք փրկված հավատքի ձեռովը, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է » (Եփես. 2:8).** Ինչպես անկարող էիր ինքդքեզ փրկել որևէ վտանգից, այնպես էլ անկարող ես փրկել հավիտենական կորուստից: Պետք է ընդունես Տերոջ պարգևը՝ մեղքերի ներումը և հավիտենական կյանքը, Հիսուս Քրիստոսին հանդեպ հավատքով:

Անբարո հոգևոր

Մեկ այլ վերապրող կարող է հարցնել՝ « ինչու՞ ես» : Ես վստահել եմ Հիսուսին տարիներ առաջ, որ կների իմ մեղքերը և կտա հավիտենական կյանք, չէ որ ես դարձա Տերոջ զավակը, բայց զավակի արժանի կյանք չեմ ապրում: Քանի որ ապրեցի իմ երջանկության համար և հեռացա Տերոջից: Թմրանյութերով ավիրեցի միտքս և իմ մարմինը, անառակ կյանք էի ապրում, ստում, գողանում, և խաբում էի: Մահվան հետ բախվելը, լուրջ ահազանգ էր Տերոջ կողմից,: Պետք էի մահանաի: Այնպես որ արժանի չեմ ապրելու» :

Աստված ևս մեկ անգամ տալիս է հնարավորություն, Նա թույլ տվեց, որ անցնեք կյանքի համար վտանգավոր փորձությունով, որ հիշեցնի բոլորիս, որ Ինքը դեռ մեզ հետ է և գիտի ամեն բան մեր մասին: Սաղմ. 139; 2- գրված է, **« Դու գիտես իմ նստելն ու վեր կենալը, հեռվից իմանում ես իմ մտածումները: 4 Որովհետև դեռ խոսք չկա իմ լեզվի վրա, ահա, ո՜վ Տեր, դու բոլորը գիտես: 7 Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ: 8 Եթե վեր ելնեմ երկինք, դու այնտեղ ես, և եթե պառկեմ դժոխքի մեջ, ահա դու այնտեղ ես: 11 Եթե ասեմ. «Թող խավարն ինձ ծածկի», այն ժամանակ գիշերն էլ լույս կդառնա իմ շուրջը: 12 Մութն էլ խավար չէ քեզ համար, գիշերն էլ լույս է ցերեկի պես, խավարն էլ լույսի պես է քեզ համար »:**

Տերը շատ լավ գիտի, թէ ինչ եք անում, և ցանկանում է որ դուք հնազանդ լինեք Իր Խոսքին և հաղորդակցվեք Նրա հետ: **«9 Երիտասարդն ի՞նչով իստակ կ'անէ իր ճանապարհը. Քո խօսքի պէս զգուշանալով: 11 Իմ սրտումը թաքցրի քո խօսքերը, որ չ'մեղանչեմ քեզ դէմ » (Սաղմ. 119:9, 11):** Մեր մեղավոր ապրելակերպը զատում է Աստծուց: **«9 Իսկ եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու մեզ և մաքրելու մեզ ամեն անիրավությունից » (1 Հովհ 1:9):** Երբ մենք խոստովանենք մեր մեղքերը, Տերը ներում և մաքրում է մեզ ամեն անիրավությունից: Մեքերը ներվելուց հետո, կարող ենք հաղորդակցվել Հոր հետ, և Նա կլսի և կպատասխանի մեր աղոթքները: **«7 Իսկ եթե լույսի մեջ ենք քայլում, ինչպես որ Նա է լույսի մեջ, հաղորդության մեջ ենք միմյանց հետ, և նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից » (1 Հովհ 1:7):** Իսկ եթե հրաժարվենք հնազանդվել Իրեն և ապրենք եսասիրաբար մեղքի մեջ, Տերը կարող է Իր ողորմությունը վերցնել Իր մեղավոր զավակից և անգամ՝ աշխարհից վերցնել:

Իր ողորմությամբ Նա ևս մեկ հնարավորություն է տալիս, Իր Խոսքի համաեմատ ապրելու և հնազանդվելու համար, բայց եթե չլսեք արթնացնող կոչին, հավանաբար վերապրելու շանս չլինի:

Ինչու՞ որոշ հոգևորներ շարունակում են ապրել, իսկ որոշներ՝ ննջեցին: Պատճառներից մեկը, որ Տերը երբեմն կարող է վիշտ և նույնիսկ մահ բերել մարդու կյանքում, այն է, որ մարդը հրաժարվում է հնազանդվել Նրան: Ինչպես Պողոսը, ով զգուշացնում է Կորնթոսի հոգևորներին՝ **« 30 Դրա համար էլ ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագարներ կան, բավականաչափ են նաև նրանք, ովքեր ննջեցին: 30 Դրա համար էլ ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագարներ կան, բավականաչափ են նաև նրանք, ովքեր ննջեցին » (1 Կորն 11:30),** իրենց մեղքի հետևանքով շատ անդամներ, ֆիզիկապես թույլ էին և հիվանդ, իսկ ովքեր չուզեցին ուղղվել, պատժվեցին՝ անգամ մահով:

Երբ ինչ-որ մեկը ապրում է մեղքի մեջ և հրաժարվում է սովորել կամ հնազանդվել Աստծո Խոսքին, Տերը հնարավոր է տվյալ անձին հանձնել իր սեփական ցանկություններին և թույլ տալ, որ նա քաղի իր արարքների պտուղները: «**28Եվ քանի որ չփորձեցին իրենց մտքի մեջ Աստծուն ունենալ, Աստված նրանց մատնեց անարգ մտքերի, որ անվայել բաներ կատարեն» Հռովմ: 1;28:** Երբեմն էլ Տերը պարզապես կհեռացնի տվյալ մարդուն այս կյանքից: Եթե մարդ չի սովորում ապրել ըստ Խոսքի, ապա նա ստիպված կլինի սովորել փորձությունից կամ չար ցանկության հետևանքից, կամ վախը կդառնա իր ուսուցիչը կամ Տերոջ խրատը: Հավատացյալները քանի դեռ ապրում են, ևս մեկ հնարավորություն ունեն դառնալ դեպի Տերը: Նրանք ովքեր դարձի չեն գա, հնարավոր է առժանանան Աստվածային սպառնացող խրատին՝ անգամ պատժվեն մահով: Տերը ոչ մեկի մահը չի ցանկանում, այլ որ ընտրեն կյանքը: **«12Ո՞վ է այն մարդը, որ ուզում է կյանք ունենալ և *լավ* օրեր է ուզում բարություն տեսնելու համար. 13 Պահի՛ր քո լեզուն չարությունից և քո շրթունքները, որ նենգություն չխոսեն: 14 Հեռացի՛ր չարից և բարի՛ն գործիր. խաղաղությո՛ւն փնտրիր և գնա՛ նրա ետևից: 15 Տիրոջ աչքերն արդարների վրա են, և նրա ականջները՝ նրանց աղաղակի ձայնին: 16 Տիրոջ երեսը չարագործների դեմ է՝ նրանց հիշատակը երկրից ջնջելու համար » (Սաղմ: 34:12-16):**

Մեկ այլ վերապրող կարող է ասել, « ես հավատում եմ Քրիստոսին, և Նա եղել է իմ պաշտպանը ու Փրկիչը ողջ իմ կյանքում, ես պատրաստ էի գնալ երկինք, եթե Նա կանչեր ինձ դրախտ: ես չէի վախենում մահից, բայց այդ ամենի մեջ ողջ մնացի: ինչու՞ ես, ինչու՞ Նա ինձ Իր տուն չտարավ»: Թանկագին վերապրող, ոչ միայն այդքանը, ապա ունեիր մեծ սպասումներ, վերին տուն գնալու: Պողոսը գրում է 2 Կորն: 5;6-9 **«6 Արդ ամեն ժամ վստահությամբ լի ենք ու գիտենք, որ այս մարմնի մեջ մնալով՝ հեռու ենք Տիրոջից, 7 (որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե տեսողությամբ): 8Բայց վստահ ենք ու նախընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել: 9 Դրա համար էլ ձգտում ենք, որ մնանք, թե դուրս գանք, հաճելի լինենք նրան » :**

Բայց քանի, որ ճմահացաք,թէև ձեր ցանկությունն էր Տերոջ հետ լինել, սակայն Նա այլ ծրագիր ունի ձեզ համար: Իր ժամանկին Նա ձեզ կտա ձեր սրտի ցանկությունը և կկանչի ձեզ տու, բայց մինչ այդ, հտնեք Իր ծրագրին: քանի որ դուք անցել էք մահվան և կյանքի այդ ուղղին, կարող էք աղոթել նրանց համար, ովքեր անցնում են դժվարություններով: Պողոսը պնդում է աղոթող մարդկանց կարևորությունը, բերելով անձնական օրինակը 2 Կորն: 1:8-*10* **«8 Եղբայրնե՛ր, չենք ուզում, որ դուք տեղյակ չլինեք այն նեղությանը, որ մեզ պատահեց Ասիայում: Այն մեր կարողությունից այնքան ծանր էր, որ նույնիսկ մեր ապրելու հույսն էինք կորցրել: 9 Մենք ինքներս ընդունել էինք մեր մահվան վճիռը, որպեսզի հույսը ոչ թե մեզ վրա դնեինք, այլ Աստծու, որ հարություն է տալիս մեռելներին: 10 Նա է, որ այնպիսի՛ մահից փրկեց մեզ ու դեռ փրկելու է, Նրա վրա հույս ունենք, որ տակավին փրկելու է՝ մեզ համար ձեր արած աղոթքի օգնությամբ, »:**

Թեև շատ վերապրողներ կարող են հարցնել՝ «ինչու՞ ես», հնարավոր է, որ նրանք ողջ են մնացել, քանի որ ինչ-որ մեկը աղոթում էր իրենց համար: Կան շատ մարդկային

պատմություններ, ովքեր շանկություն ունեն աղոթելու ինչ-որ մեկի համար,առանց որևէ հայտնի պատճառի, և ավելի ուշ տեղեկանում են, որ տվյալ անհատը անցնում էր լուրջ դժվարությունով: Աստված միշտ պատասխանում է Իր հավատարիմ զավակների աղոթքներին: Մեկ այլ պատճառ, որ վերապրում ենք, որպեսզի կարողանանք մխիթարել ուրիշներին: (2 Կորն: 1:4) «**4 որ մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց:** »: Անցնելով նման փորձություններով, դուք կարող եք վկայել ուրիշներին, որ ոչինչ չի կարող բաժանել մեզ Աստծո սիրուց: Հռովմ: 8:38 -39. **«Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ զորությունները, ո՛չ ներկայիս և ո՛չ գալիք բաները, 39 ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ ստեղծված մի ուրիշ բան չեն կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է:»**

Մեկ այլ վերապրելու նպատակ՝ փառավորել Աստծուն: 1 Պետր: 1:6-8 **«6 Նրանով կուրախանաք, թեև հիմա պետք է որ տարատեսակ փորձություններից փոքր-ինչ տրտմած լինեք, 7 որպեսզի ձեր հավատի փորձառությունն ավելի արժեքավոր լինի, քան կորստյան ենթակա ոսկին, որ կրակով է փորձվում, ձեռք բերի գովք, պատիվ ու փառք Հիսուս Քրիստոսի հայտնության ժամանակ, 8 որին չտեսած՝ սիրում եք, որին հավատացիք, թեև այժմ չեք տեսնում, և ուրախ եք անպատմելի ու փառավոր խնդությամբ »:**

Վերապրողի ընտրությունը

Մխիթարություն, տառապանք, խաղաղություն, ուրախություն, ցավ, սեր, ատելություն, կամ բարին, չարիք, Աստված կամ սատանա: -- Շատ անգամ մենք ենք ընտրում, թէ ինչ հանգամանքներ կլինի մեր կյանքում: Մենք գիտենք, որ աշխարհում գոյություն ունի չարիք, նույնիս ստեղծագործության հենց սկզբում տեսնում ենք Եդեմում սատանային, թէ ինչպես է խաբում Եվային՝ կասկածներ առաջացնելով Աստծո Խոսքի նկատմամբ: **«Իսկապե՞ս Աստված ասաց / բնավ չեք մեռնի»,** նրա հաջողված փորձությունը, աշխարհ բերեց՝ մեղք, ցավ և նույնիսկ մահ:

Ծնն: 4-ում Ստված ասեց Կայենին՝ **«Ինչո՞ւ ես բարկացել և ինչո՞ւ ես երեսդ կախել: 7 Չէ՞ որ, եթե բարին անես, երեսդ կբարձրանա, բայց եթե բարին չանես, մեղքը դռանդ մոտ պառկած է, և նա քեզ է ցանկանում. բայց դու իշխի՛ր նրա վրա »:** Կայենը չիշխեց մեղքին, և նա սպանեց իր եղբորը ու բաժանվեց իր ընտանիքից:

Հիսուս զգուշացրեց Պետրոս Առաքյալին ասելով՝ Ղուկ: 22:31. **«Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի պես մաղել: »**

Բոլոր հոգևորները զգուշացված են սատանայի վտանգի մասին: **(1 Պետր: 5:8). «Զգո՛ն եղեք, արթո՛ւն եղեք, որովհետև ձեր թշնամին՝ սատանան, մռնչացող առյուծի պես շրջում է և փնտրում, թե ո՛ւմ կուլ տա:»**: քանի, որ մենք համեմատաբար զիճում ենք սատանայի իմաստությանը և զորությանը, Աստված կպաշտպանի Իր զավակներին: **Սաղմ: 97:10 «Ո՛վ դուք, որ սիրում եք Տիրոջը, ատեցե՛ք չարը. նա պահում է իր սրբերի անձերը. ամբարիշտների ձեռքից պիտի փրկի նրանց : (Սաղմ: 121:7-8). Տերը պիտի պահպանի քեզ ամեն չարից. նա պիտի պահպանի քո անձը: Տերը պիտի պահպանի քո երթուդարձը՝ այսուհետև մինչև հավիտյան»:** Այս խոստումները միայն այն մարդու համար է, ով վստահում է Հիսուս Քրիստոսին, և սիրում է Տերոջը, հնազանդվելով Իր Խոսքին: Ահա համարների ցանկ թէ

ինչպես կարելի է հախթել չարին: **1 Հովհ: 4:4, Եփես: 4:27, 6:11-13, 1 Կորն: 2:11, Փիլիպ: 4:13, 1 Թես: 5:22.**

Աստծո Ծրագրի Մասը

Տերը չի երաշխավորում, որ հոգևորները երբեք նեղություններ չեն կրելու, իրականում այն կարող է Իր ծրագրի մի մասը լինել, որը կարող է տանել դեպի հոգևոր հասունության և Աստծուն փառք բերելուն: **Հռովմ: 8:16-18: « Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ մենք Աստծու որդիներ ենք: Եվ եթե որդիներ ենք, ապա նաև ժառանգներ, Աստծու ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ, որպեսզի եթե նրա չարչարանքներին կցորդ ենք, <u>փառքին</u> էլ հաղորդակից լինենք: Կարծում եմ, որ այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն համեմատվելու այն գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեր մեջ: 2 Կորն: 4:17. Որովհետև մեր այժմյան թեթև նեղությունը գերազանց հավիտենական փառք է պատրաստում մեզ համար »:**

Ազգերի Դատաստանը

Երբ չարը աստիճանաբար գերիշխում է որևէ ազգի վրա, Տերոջ բարկությունը կարող է վերածվել դատաստանի հենց այդ ազգի նկատմամբ՝ բերելով աղետներ: Եթե մարդիկ դարձի չգան իրենց չար ճանապարհներից, Աստված կարող է զարկել՝ հիվանդությունով, համաճարակով, տնտեսական ճկնաժամով, սովով, բռնությամբ, ահաբեկչությամբ՝ համատարած բռնություններ, սպանություններ, սեռական ոտնձգություններ,- բնական աղետներ՝ ջրհեղեղ, փոթորիկ, երկրաշարժ, հրաբուխ, - պատերազմներ, ներխուժումներ այլ երկրի կողմից,- ազատության կորուստ՝ ստրկություն և գերություն: Սրանք բոլորն էլ, նախազգուշացնումներ են Տերոջ կողմից, անհրաժեշտ է վերադառնալ աստվածային չափանիշին համապատասխանող վարքագծին: Բայց եթե ազգը դարձի չգա, դատաստանը կարող է թեժանալ և ազգը ամբողջովին կործավի:

Այս չար օրերին կարող են տուժվել հոգևորները, և անգամ՝ մահանան: Նրանք իրենց ազգի մի մաս են կազմում: Նույնիսկ Աստծո ժողովուրդը տառապեց, քանի որ նրանք ապստամբ հասարակության մեջ էին ապրում: Սբ. Գրային օրինակներ՝ երբ Եղիան մարգարեացել էր դատաստանի վերաբերյալ Իսրայելի թագավորության՝ չար Աքազ թագավորի և իր կնոջ՝ Հեզաբելի նկատմամբ՝ սպասվում էր երաշտ երկար տարիների: Տերը երաշտ բերեց երկրում, որը դատաստանի մի մաս էր, բայց Տերը հոգաց և Եղիային ուղարկեց մի առուի մոտ, և հրամայեց ագռավին, որը ուտելիք բերի մարգարեին: Դատաստանի երկարատևության պատճառով, նույնիսկ առուն վերջը վերջո ցամաքեց: Եվ ինչպես տեսնում ենք, որ անգամ Եղիան անմաս չմնաց այդ դատաստանից: Սակայն Տերը շարունակեց հոգալ Եղիայի մասին և ուղարկեց այրի կնոջ մոտ, ով Աստծո շնորհիվ կարողացավ կերակրել ու տեղավորել նրան մինչև երաշտի վերջ:

Երբ Իսրայելը հեռացավ Աստծուց և երկրպագեց բահաղին և իրենց երեխաներին զոհաբերեցին կուռքին, Տերը դատավճիռ կայացրեց այդ ազգի վրա: Երուսաղեմը ավիրվեց Տաճարի հետ միասին: Շատ մարդիկ, ովքեր մնացին քաղաքում, սպանվեցին սրով կամ սովից ու հիվանդությունից մահացան, իսկ մնացածին գերիվարելով տարան ստրկության՝ Բաբելոն: Գերիների մեջ կային փրկվածներ, որոնց Աստված առաջարկեց Իր պաշտպանությունը; **(Եսայ: 41:10).« Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ, մի՛ զարհուրիր, որովհետև ես քո Աստվածն եմ: Ես քեզ կզորացնեմ և կօգնեմ քեզ, նաև քեզ նեցուկ կլինեմ իմ արդար աջով »:**

Փոփոխություն

Որպես վերապրող՝ դու ինչ-որ աղետի միջով ես անցել, և կրել ես կորուստ: Կորցրե՞լ եք մեկին, ում շատ էիք սիրում, թէ տունը կամ ունեցվածքը: կորցրե՞լ եք ձեր առողջությունը, թէ ձեռքը, թէ ոտքը, թէ աչքերից մեկը; Կորցրե՞լ եք ձեր հավատքը, ազատությունը, մտքի անդորրը: Ձեր բոլոր ծանոթները և ընկերները կփորձեցին մխիթարել ձեզ ասելով՝ «ամեն ինչ լավ կլինի կամ հիմա ամեն ինչ լավ է»: Բայց մնում ես վատ վիճակում և ոչինչ լավ չէ քեզ մոտ:

Ինչ՞ ես պատրաստվում անել

Անկման սպիռալ; «Կա ճանապարհ, որն ուղիղ է թվում մարդու առաջ, բայց նրա վերջը մահվան ճանապարհներն են » Առակ: 14:12:

Աղետը, որի միջով անցել եք, արդեն փոխել է ձեզ, և ստիպում է փոփոխություններ կատարել ձեր կյանքում, որի շնորհիվ կարող եէ պայքարել դիպրեսիայի դեմ: Դուք դուրս եք եկել ձեր հարմարավետության գոտուց և չգիտեք, թէ ինչ անել ու պայքարում եք այն մտքի հետ, որ ամեն ինչ այլ կերպ է լինելու: Դուք ունեք ընտրության հնարավորություն: Իսկ եթե հրաժարվեք փոփոխություններ կատարել, կհայտնվեք վայրընթաց սպիռալի մեջ, որը կավելացնի ձեր ցավն ու դիպրեսիան:

Եթե ձեզ թույլ տաք ինքներդ ձեզ, թաթախվել ձեր ցավի և վախի մեջ, ապա ավելի խորը կսուզվեք դիպրեսիայի մեջ, որը կհանգեցնի կործանարար փոփոխությունների և վատ սովորության:

Որոշները մեկուսանում են ընտանիքից, ընկերներից վախենալով, որ իրենց չեն հասկանում: Այնուհետև մենակությունը նրանց ավելի է տանում դեպի վայրընթաց սպիռալ:

Ոմանք էլ փորձում են խեղդել իրենց վիշտը՝ ալկահոլով կամ թմրանյութով՝ ցավը մեղմացնելով: Այնուհետև կորցնում են իրենց կյանքում գործելու ունակությունը, և անգամ կարող են կորցնել աշխատանքը կամ խուսափել սոցիալական գործնեությունից; Յուրաքանչյուր վատ որոշման հետ նրանք ավելի են խորանում դեպի անկման սպիռալի մեջ, և որքան խորանում են այնքան ավելի դժվար է դառնում դուրս գալը: Ի վերջո, անկման սպիռալով կյանքը հագեցնում է դիպրեսիայի, մենակյացության, դատարկության, առողջության վատթարության, մահվան կամ ինքնասպանության:

Նորովի Մոտեցում

Դուք աղետ եք ապրել, և դա փոխել է ձեզ: Դուք արդեն ողջ եք մնացել; Հիմա քանի որ ամեն ինչ չի վերադառնա այնպես, ինչպես եղել է, բոլորս պետք է փոփոխություններ կատարենք և գտնենք կյանքի նոր նորմալ ձև:

Քայլ առաջին;

Փոխեք ձեր վերաբերմունքը և մտածելակերպը Աստծո և Նրա հետ ձեև հարաբերության նկատմամբ: Եսայ: 55:8-9 գրում է **«Արդարև, իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր**

ճանապարհներն իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը։- 9Այլ ինչպես երկինքն է բարձր երկրից, այնպես էլ իմ ճանապարհները բարձր են ձեր ճանապարհներից, և իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից։»

Խորհեք ձ եր գոյատևման պատճառի մասին, արդյո՞ք դա անձնական է, թէ Տերն է տալիս ժամանակ, որ Նրա զավակը դառնաք, Տեր Հիսուս Քրիստոսին հավատալով։ **(Գաղ։ 3։26). «Որովհետև ամենքդ Աստծու որդիներ եք Քրիստոս Հիսուսին հավատալով։»**

Արդյո՞ք Աստված փորձում է ցույց տալ ձեզ, որ լավն կամ վատն եք, Բոլորս էլ Փրկչի կարիք ունենք։ (Եփես; 2։8). **«Շնորհով եք փրկվել հավատի միջոցով, և սա ձեզանից չէ, այլ Աստծու պարգևն է։»։**

Արդյո՞ք Աստված ձեզ՝ որպես հոգևոր, երկրորդ հնարավարությունն է տալիս ապրել Աստծո Խոսքին հնազանդելով։ (Սաղմ; 119; 11). **«Իմ սրտում թաքցրի քո խոսքերը, որ չմեղանչեմ քո դեմ։»**

Արդյո՞ք Աստված ցույց էր տալիս ձեզ, որպես հոգևոր, որ Նա դեռևս ծրագիր ունի ձեր կյանքի համար։ 2 Կորն։ 5։9 **«Դրա համար էլ ձգտում ենք, որ մնանք, թե դուրս գանք, հաճելի լինենք նրան։ »**

Ինչպիսին էլ որ լինի ձեր անցյալ կյանքը, ձեր նորովի կյանքում պետք է գիտակցել, որ Աստված ցանկանում է, որ Իր հետ հաղորդակցվել և վստահել Իրեն, և ոչ թե միայն փրկել ձեզ ինչ որ աղետից, բայց վստահել Իրեն, Ով իմաստություն, զորություն և ուժ է տալիս կրկին լիարժեք կյանք ապրելու համար։

Պատմության ընթացքում Տերը, Իրեն հավատացողներին տվել է թանկարժեք խոստումններ, որոնք Աստծուն վստահելու գործում քջալերում են։ **(Սաղմ։ 55։22) «Քո հոգսը գցի՛ր Տիրոջ վրա, և նա խնամք կտանի քեզ համար. նա չի թողնի, որ արդարը հավիտյան շարժվի տեղից։»**

(Սաղմ։56։3) «Որ օրը որ վախենամ, հույսս քեզ վրա պիտի դնեմ»։

(Սաղմ։ 34։4).« Ես դիմեցի Տիրոջը, և նա պատասխան տվեց ինձ և իմ ամեն սարսափից ազատեց ինձ։

(Եբր։ 13։6) «Այնպես որ համարձակվում ենք ասել.Տերն է իմ օգնականը,և ես չպիտի վախենամ.մարդն ինձ ի՞նչ կարող է անել »

(Փիլպ։ 4։6-7).« Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն։ 7Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի։»

Եկրորդ քայլ

Փոխակերպեք ձեր մտածելակերպը։ **(Հռովմ։ 12։2).« Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը։»**

Դուք կարող եք նորոգել ձեր միտքը՝ անհանգստացնող մտքերը փոխարինելով Սբ: Գրային խոստումներով: **Փիլպ: 4:8).« Այսուհետև, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ անարատ, ինչ որ սիրելի, ինչ որ բարեհամբավ, առաքինի և գովելի, ա՛յն մտածեք:»**

Երբ անհանգստացնող և վախեցնող մտքեր են գալիս, հրաժարվեք դրանց վրա կենտրոնանալուց, փոխարենը Սբ: Գրային բարի մտորումների վրա կենտրոնացեք: Երբ արթնանում եք մղձավանջից, անմիջապես կարդացեք և բարձրաձան արտաբերեք Սբ: Գրային խոստումներ, և Տերոջ խաղաղությունը կմիխիթարի ձեզ: Վատ մտքերից հնարավոր չէ ազատվել և հեռացնել, դա պետք է փոխարինվի դրական մտքերով:

Երրորդ քայլ

Աղոթել; Անդադար, (1 Թես: 5:17). Ինչու՞, որովհետև մենք բավարար զորություն չունենք չարը հախթահարելու, առանց Աստծո օգնության: Նա խոստացել է լսել և պատասխանել մեր աղոթքներին մեր կարիքի ժամանակ:

(Փիլպ: 4:6. «Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: »

(Սաղմ: 102:1-2). «Ո՛վ Տեր, լսի՛ր իմ աղոթքը, և իմ աղաղակը թող հասնի քեզ: 2Երեսդ ինձնից մի՛ թաքցրու իմ նեղության օրը. խոնարհի՛ր ականջդ դեպի ինձ. այն օրը, երբ կանչեմ, շուտով պատասխա՛ն տուր ինձ:»
(Սաղմ: 91:15).« Նա կկանչի ինձ, և ես պատասխան կտամ նրան. ես նրա հետ կլինեմ նեղության մեջ. կապրեցնեմ նրան և փառավոր կդարձնեմ նրան:»

(Սաղմ: 91:15).« Նա կկանչի ինձ, և ես պատասխան կտամ նրան. ես նրա հետ կլինեմ նեղության մեջ. կապրեցնեմ նրան և փառավոր կդարձնեմ նրան:»

Քայլ չորրորդ

Մի մեկուսացրեք ինքներդ ձեզ: Գտեք Խոսքը սովորեցնող Եկեղեցի և կանոնավոր այցելեք, այն սերտելու համար: Ընկերացի հավատարիմ մարդկանց հետ, ովքեր թե կխրախուսեն և թե կաղոթեն ձեզ հետ և ձեզ համար: Կիսվեք ձեր վախերի և խնդիրների մասին մարդկանց հետ, ում կարող եք վստահել:

Քայլ հինգերորդ

Կերեք առողջ սնունդ և կանոնավոր քնեք, սա մեծ ազդեցություն է թողնում հոգեկան առողջության վրա: Ահա Սբ: Գրային օրինակ; 3 Թագ: 19:4-ում, երբ Եղիան փախչում էր Հեզաբելի սպառնալիքից, կյանքը փրկելու համար, նա շատ ընկճված էր[4], **«Իսկ ինքը մեկ օրվա ճանապարհ գնաց անապատում, եկավ ու նստեց մի գիհի ծառի տակ և սրտանց ուզեց, որ մեռնի, և ասաց. «Արդեն բավական է, ո՛վ Տեր, ա՛ռ իմ հոգին, որովհետև ես իմ հայրերից լավը չեմ»: 5Եվ պառկեց ու քնեց գիհու տակ. և ահա մի հրեշտակ դիպավ նրան և ասաց նրան. «Վե՛ր կաց, կե՛ր »:** Աստված նախ Եղիային քուն և կերակուր տվեց, հետո խոսեց նրա հետ:

Քայլ վեցերորդ

Զբաղվեք հետաքրքիր աշխատանքով կամ հոբբիով, շփվեք հետաքրքիր մարդկանց հետ և օգնեք նրանց: Ձեր միտքը ակտիվ պահեք այնպիսի գործողություններով, որոնք օտակար կլինեն ձեզ և ուրիշների համար:

Քայլ յոթ;

Բաց եղեք լավ և նոր փորձարությունների համար և խուսափեք այն վայրերից ու բաներից, որոնք ձեզ ետ են վերադարձնում դեպի դեպրեսիայի մեջ:

Սաղմ: 1

**«1Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի համաձայն չի գնում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում,
2Այլ նրա հաճույքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր մտածում է նրա օրենքի մասին:
3Նա ջրերի հոսանքի մոտ տնկված ծառի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը թառամելով չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան:
4Այսպես չեն ամբարիշտները, այլ նման են հարդի շյուղի, որ ցրիվ է տալիս քամին:
5Սրա համար ամբարիշտները չեն կարող կանգնել դատաստանի մեջ, և ոչ էլ մեղավորները՝ արդարների ժողովում,
6Որովհետև Տերը ճանաչում է արդարների ճանապարհը, մինչդեռ ամբարիշտների ճանապարհը պիտի կորչի:»**

(Հեսու 1:8).

«Այս օրենքի գիրքը թող չհեռանա քո շուրթերից, այլ գիշեր-ցերեկ դրա մասի՛ն մտածիր, որպեսզի պահես և կատարես ամենը, ինչ որ գրված է դրա մեջ. այն ժամանակ ճանապարհը դու հաջող կդարձնես և այն ժամանակ հաջողություն կունենաս:»

(Թվոց: 6:24-26).

« Տերը օրհնի քեզ ու պահպանի քեզ: Տերը պայծառացնի իր երեսը քեզ վրա ու ողորմի քեզ: Տերը բարեհաճ լինի քո հանդեպ և խաղաղություն տա քեզ »

Տեղական կոնտակտային տվյալներ։

Լրացուցիչ պատասխաններ կամ հոգևոր առաջնորդության համար։

Փնտրում եմ, Աստվածաշնչային սերտողության Եկեղեցի։

Թարգմանիչ՝ *Ս։Հակոբյան*